Զուխուր-չամ (խորացեալ եղէնեաց անտառ) մեծ լիճ է. Աղբուլաղ լերան հիւսիս արևմտեան կողին բարձունքը, եղէնեաց անտառի մի միջավայրն, ուստի կը բղխի Կապուտայ Ջրի միջին մեծ ճիւղը[1]:

Պախրկոլ (պղնձեայ լիճ), որ Կապուտայ բերդի հիւսիսն և Խանտուտայ հարաւն, երկուքին ևս մօտ է շուրջը ուռենի թփերով շարած, ունի յստակ ջուր:

Կօլա տէյրան (բաղի լիճ), որ Պատուռայ Ջրի սկզբնաւորութիւնը կը կազմէ:

Շահ-կոլ, որ Ղօփուզ Ջրոյն մէկ ճիւղն կը կազմէ: Այղր-կոլ ևն. նաև Կօլա-Հայրան լիճն Խալեազի լեռներու վերայ. նաև Դուռնա-կոլ:

Ցեսած եմ բազմաթիւ փոքր լճակներ. որոց անունը դժբաղդաբար չեմ յիշեր. լսած եմ մեծ և փոքր լճակներ Խալեազի և Ծաղկանց լեռներու վերայ, որք կարգ մի Ջրերու սկզբնաւորութիւն կտան:

Բաղրևանդայ դաշտագետներու մէջ գտնուած բազմաթիւ կռունկներն այս լճերու ծանծաղ տեղերն ցախեր կը կուտակեն, Ջրից վեր կը բարձրացնեն, ձու կածեն, ձագեր կը հանեն:

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

Բաղրևանդ ունի երկու արքունական ճանապարհ, որոց մին հին Շահեօլին է, որ Ջրաբաշխ լեռներու գագաթից ձգուած, երկրորդն դաշտի միջով կանցնի, որ

---

1. Կապոյտ որ մինչև ցարդ գրեթէ բոլորովին անծանօթ մնացած էր, որոյ դրից վերայ պիտի գրեմ տեղագրականիս յաւելուածին մէջ.